ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

05-ը ապրիլի 2016թ.

Քաջաան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2016 թվականի ապրիլի 5-ին ժ.11^{00}-ին կայացած
ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի

1. **Հաշվետվություն՝ ՀՀ Տավուշի մարզի ՔՊ համակարգի 2015թ. Գործունեության մասին**

/զեկ. Մ.Մխիթարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ/

2. **Մարզում ՏԻՄ-երի կողմից առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողության իրականացման մասին**

/զեկ.Գ.Հարությունյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման

ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ/

3. **Մարզի համայնքների 2015թ. Տեղական բյուջեների կատարողականների և 2016թ. Հաստատված տեղական բյուջեների մասին**

/զեկ. Ռ.Ներսեսյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի

Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

4. **Մարզի համայնքներում աղբահանության, սանմաքրման և բարեկարգման աշխատանքների վերաբերյալ**

/զեկ. Մ.Ղալումյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի

քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ/

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

05.04.2016թ. **ք.Իջևան**

Նիստը վարում էր ՀՀ Տավուշի մարզպետ Հ.Աբովյանը.

Մարզխորհրդի 63 անդամներից ներկա էին 59-ը:

Նիստին ներկա էին ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալները, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, պատասխանատու աշխատողներ:

1. Հաշվետվություն՝ ՀՀ Տավուշի մարզի ՔՊ համակարգի 2015թ. Գործունեության մասին

/զեկ. Մ.Մխիթարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ ՀՀ Տավուշի մարզում առկա են արտակարգ իրավիճակների կանխման և դրանց հետևանքների նվազեցման ծրագրերը՝ հաստատված ՀՀ Տավուշի մարզպետի կողմից, որոնք 2015թ. վերանայվել և թարմացվել են:

2015թ. ՀՀ Տավուշի մարզպետի ղեկավարությամբ ՀՀ Տավուշի մարզպետարանը,

ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Տավուշի մարզային փրկարարական վարչությունը, ՔՊ ծառայությունները և տեղական ինքնակառավարման մարմինները հիմնական ջանքերը նպատակաուղղել են մարզում արտակարգ իրավիճակների խնդիրների լուծմանը: Հաշվի առնելով մարզում բնական և տեխնածին աղետների սպառնալիքը, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այս տարի շարունակվել են իրականացվել դրանց կանխատեսման, կանխարգելման ու հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումները:

Համայնքներին սպառնացող աղետներից պաշտպանելու հարցերով հանդիպում-քննարկումներ են կազմակերպվել Տավուշի ԱՌՆ մարզային թիմի անդամների, մարզի բոլոր համայնքների ղեկավարների հետ: Անց է կացվել մարզի գետերի հնարավոր վարարումների և հեղհեղումների հետ կապված հուների վտանգավոր տեղամասերի ուսումնասիրություն և անհրաժեշտ աշխատանքների ծավալների ճշտում:

ՀՀ Տավուշի մարզպետարանի և ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ համապատասխան մասնագետները մասնակցել են Հարավային Կովկասում ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման գրասենյակի ծրագրերի «Քաղաքների կայունություն Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում» նախագծի շրջանակներում ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան և Բերդ քաղաքների ղեկավարների հետ հանդիպմանը:

Կազմվել և իրականացվել է ԱՌՆ մարզային թիմի 2015 թվականի աշխատանքային ծրագիրը:

Մասնակցել են ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում, ԱՌՆԱՊ շարջանակներում «Դարձնենք քաղաքները դիմակայուն, իմ քաղաքը պատրաստվում է» թեմայով դասընթացին:

Մասնակցել են Շվեյցարիայի միջազգային զարգացման և համագործակցության գործակալության հետ համատեղ իրականացվող <<Տարածքային արագ արձագանքման թիմերի ստեղծում>> ծրագրի շրջանակներում Երևան քաղաքում Տավուշի և Լոռու քաղաքային որոնողափրկարարական թիմերի անդամների համար դասընթացների անցկացմանը:

Մասնակցել են <<Հարավային Կովկասում աղետների ռիսկերի նվազեցմանը>> ՕՔՍՖԱՄ-ի կողմից կազմակերպված հանդիպմանը:

ՀՀ Տավուշի մարզում համայնքների դիմակայունության բարելավման ծրագրի շրջանակներում ՕՔՍՖԱՄ և ՕՔՍԵՋԵՆ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ կնքվել է հուշագիր:

ՀՀ ՏԿԱԻՆ ՃԿՊԱ-ում ուսուցում են անցել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների ղեկավար կազմից 20 անձինք:

ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ կողմից ՀՀ Տավուշի մարզպետարանի հետ համատեղ 2015թ.կազմվել(ճշտվել) են մարզի տարածքում տարբեր բնածին և տեխնածին արտակարգ իրավիճակների համար բնակչության պաշտպանության պլանները:Բացի այդ, տարածաշրջանների անտառատնտեսությունների կողմից մշակվել, ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ հետ համաձայնեցվել և ՀՀ Տավուշի մարզպետի կողմից հաստատվել են անտառների հակահրդեհային միջոցառումների տարեկան պլանները :

ՀՀ կառավարության 02 հուլիսի 2015 թ. թիվ 766-Ն <<ՀՀ 2015թ.պետական բյուջեից գումար հատկացնելու և ՀՀ կառավարության 2014թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1515-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> որոշումով ՀՀ Տավուշի մարզին հրատապ ծրագրով հատկացված 28 մլն. դրամով 2015թ. ընթացքում Նոյեմբերյանի տարածաշրջանի Պտղավան, Լճկաձոր ,Հաղթանակ, Բերդավան, Կողբ և Արճիս համայնքներում տեղադրվել են համապատասխանաբար՝ 2, 1, 2, 2, 1, 2 հակակարկտային կայաններ:

ՀՀ Տավուշի մարզպետի կողմից ընդունվել են որոշումներ և կարգադրություններ՝

1) <<ՀՀ Տավուշի մարզում ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման մասին>> 2015 թվականի մարտի 12-ի թիվ 43-Ա որոշում:

2) <<ՀՀ Տավուշի մարզի վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման պլանը հաստատելու մասին>> 2015 թվականի մարտի 24-ի թիվ 54-Ա որոշում:

3) <<ՀՀ Տավուշի մարզում 2015 թվականի սեպտեմբերին ՀՀ գլխավոր ռազմական տեսչության կողմից անցկացվելիք աշխատանքներին նախապատրաստվելու մասին>> 2015 թվականի հունիսի 11-ի թիվ 19-Ա կարգադրություն:

4) Ճշգրտվել են ՀՀ Տավուշի մարզի համայնքների տեղեկագրերի, շենք-շինությունների և կամուրջների տվյալները:

5) Կատարվել են ՀՀ Տավուշի մարզի գետերի հնարավոր վարարումների և հեղեղումների հետ կապված գետերի հուների վտանգավոր տեղամասերի ուսումնասիրություն և անհրաժեշտ աշխատանքների ծավալների ճշգրտում:

6) ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ համապատասխան մասնագետները մասնակցել են ՀՀ Տավուշի մարզի Գետահովիտ համայնքում ճապոնացի մասնագետների հետ սողանքային մարմնի տեղաշարժը, գրունտային ջրերի մակարդակը չափող սարքերի և մթնոլորտային տեղումների քանակը չափող սարքի տեղադրման աշխատանքներին:

7) Սողանքային գոտիների սողանքային մարմնի տեղաշարժման մոնիտորինգ է իրականացվել ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան, Հովք, Լճկաձոր, Հաղարծին, Գետահովիտ և Վազաշեն համայնքներում:

8) Մեթոդական օգնություն է ցուցաբերվել ՀՀ Տավուշի մարզի ճանապարհաշինարարական կազմակերպություններին ԱԻ պլանների մշակման գործընթացում:

9) Ճշգրտվել են ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ համայնքների խմելու ջրի ջրամբարների վերաբերյալ տվյալները:

10) Հսկողություն է սահմանվել ՀՀ Տավուշի մարզի գետերի հեղեղավտանգ տեղամասերում:

11) ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ համապատասխան մասնագետները մասնակցել են ՀՀ Տավուշի մարզի Հաղարծին և Գետահովիտ համայնքներում <<JIKA>> ծրագրի շրջանակներում սողանքային գոտիների ուսումնասիրություններին:

Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ

ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ ստորաբաժանումներում անց են կացվել՝
Հատուկ տակտիկական ուսումնավարժություններ՝
1) Թիվ 62 ՀՓՋ կողմից <<Հույսի կամուրջ>> ՀԿ Իջևանի մասնաճյուղում <<Հրդեհաշիջումը նախադպրոցական հաստատություններում>> թեմայով:
2) Թիվ 63 ՀՓՋ կողմից Դիլիջանի Վ. Անանյանի անվան միջնակարգ դպրոցում <<Հրդեհաշիջումը ուսումնական հաստատություններում>> թեմայով:
3) Թիվ 64 ՀՓՋ կողմից <<Նյու-Քեմփինգ>> ՍՊԸ-ում <<Հրդեհաշիջումը ԱԳԼՃԿ-ներում>> թեմայով:
4) Թիվ 65 ՀՓՋ կողմից Նորաշենի միջնակարգ դպրոցում <<Հրդեհաշիջումը ուսումնական հաստատություններում>> թեմայով:
5) Թիվ 62 ՀՓՋ կողմից <<Իջևանի շուկա>> ՍՊԸ-ում <<Հրդեհաշիջումը առևտրի կազմակերպություններում և նյութական արժեքների պահեստներում>> թեմայով:
6) Թիվ 63 ՀՓՋ կողմից <<Ա-ՏԵԳ>> ՍՊԸ-ում <<Հրդեհաշիջումը հրդեհապայթյունավտանգ օբյեկտներում>> թեմայով:
7) Թիվ 64 ՀՓՋ կողմից <<Գվարզին>> ՍՊԸ-ում <<Հրդեհաշիջումը առևտրի օբյեկտներում և պահեստներում>> թեմայով:
8) Թիվ 65 ՀՓՋ կողմից Տավուշի գյուղապետարանում <<Հրդեհաշիջումը վարչական շենքերում>> թեմայով:
9) Թիվ 62 ՀՓՋ կողմից <<Ս. Ղազարյան>> Ա/Ձ բենզալցակայանում <<Հրդեհաշիջումը հեղուկ վառելիքի լիցքավորման կայաններում>> թեմայով:
10) Թիվ 63 ՀՓՋ կողմից Դիլիջանի Վ. Ավանյանի անվան ԲԿ-ում <<Հրդեհաշիջումը բժշկական հաստատություններում>> թեմայով:
11) Թիվ 64 ՀՓՋ կողմից <<Այրումի երկաթուղային կայարան>> ՓԲԸ-ում <<Հրդեհաշիջումը երկաթուղային տրանսպորտի շարակազմերում և կայաններում>> թեմայով:
12) Թիվ 65 ՀՓՋ կողմից Վ. Կ. Աղբյուրի մանկապարտեզում <<Հրդեհաշիջումը նախադպրոցական հաստատություններում>> թեմայով:
13) Թիվ 64 ՀՓՋ կողմից <<Նոյեմբերյան>> ՍՊԸ-ում <<Հրդեհաշիջումը բենզալցակայաններում>> թեմայով:
14) Թիվ 65 ՀՓՋ կողմից Նավուրի ԱԱՊԿ-ում <<Հրդեհաշիջումը բժշկական հաստատություններում>> թեմայով:
15) Թիվ 63 ՀՓՋ կողմից Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոցում <<Հրդեհաշիջումը ուսումնական հաստատություններում>> թեմայով:
16) Թիվ 62 ՀՓՋ կողմից <<ՌԱՖ-ՄԱՆ>> ՍՊԸ-ում <<Հրդեհաշիջումը հրդեհապայթյունավտանգ օբյեկտներում>> թեմայով:

ՀՀ Տավուշի մարզի կառավարման մարմինների և բնակչության պատրաստումը՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում:

ՀՀ Տավուշի մարզպետի կարգադրությամբ ստեղծվել և գործում են մարզային ՔՊ 12 ծառայություններ, ճշգրտված և հաստատված են բոլոր ծառայությունների պլանները՝ իրենց հավելվածներով, հաստատված են կանոնադրությունները, առկա է ՀՀ Տավուշի մարզի և 62 համայնքների ՔՊ ճշգրտված պլանները :
ՀՀ Տավուշի մարզում առկա են մարզային և 62 համայնքային տարահանման, մարզի բնակչության պատսպարման ճշգրտված պլանները:
Ճշգրտվել է ՀՀ ՊՆ 3-րդ բանակային կորպուսի հետ ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ փոխգործողությունների պլանը:
ՀՀ Տավուշի մարզում որոշակի աշխատանքներ են կատարվել բնակչության ազդարարման համակարգերի նախապատրաստման և գործունեության աշխատանքների կազմակերպման ուղությամբ

ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ համապատասխան մասնագետները մասնակցել են <<ՀՀ Տավուշի մարզում ավտոմատացված ազդարարման համակարգի ներդրման>> պիլոտային ծրագրի իրականացման շրջանակներում սարքավորումների և ապրանքների տեղադրման և կարգաբերման աշխատանքներին :

ՀՀ Տավուշի մարզում առկա LD-800 34 հատ և C3O-2 --1 հատ ազդարարման սարքերը գտնվում են սարքին վիճակում, U-40 առկա 18 ազդարարման սարքերից սարքին է 5 ,անսարք 13-ը: Անհրաժեշտ է ազդարարման սարքեր տեղադրել ՀՀ Տավուշի մարզի թվով 22 համայնքներում՝ Ենոքավան, Գետահովիտ, Աղավնավանք, Հաղարծին, Գոշ, Թեղուտ, Այրում, Արճիս, Դեղձավան ,Լճկաձոր, Չինչին, Տավուշ, Հովք,
Խաչարձան,Իծաքար,Վ,Ծաղկավան,Արծվաբերդ,Նորաշեն,Չորաթան,Վարագավան,
Վ,Կ,Աղբյուր,Նավուր համայնքներում:

Օպերատիվ նախապատրաստման ուղղությամբ

ՀՀ Տավուշի մարզում 2015թ. որոշակի աշխատանքներ են կատարվել քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում մարզի բնակչության պաշտպանության թեմաներով հրամանատարաշտաբային, շտաբային,հատուկ տակտիկական և օբյեկտային ուսումնավարժությունների կազմակերպման և անցկացման ուղղությամբ:

ՀՀ Տավուշի մարզի տարածքում ԱԻ և ՔՊ ժամանակ բնակչության պաշտպանության միջոցառումները կազմակերպվել և ղեկավարվել են համաձայն Տավուշի մարզպետի կողմից հաստատված և ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի հետ համաձայնեցված << Տավուշի մարզային փրկարարական վարչության 2015թ. հիմնական միջոցառումների պլանի >>, որի համար օրենսդրական հիմք են հանդիսացել << Քաղաքացիական պաշտպանության մասին >>, << Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին >>, << Հայաստանի փրկարար ծառայության մասին >>, << Սեյսմիկ պաշտպանության մասին >>, << Հրդեհային անվտանգության մասին >> ՀՀ օրենքները, ՀՀ նախագահի հրամանագրերը, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումները:

Հրամանատարաշտաբային ուսումնավարժություններ.

<<Շանթ 2015>> ռազմավարական հրամանատարական շտաբային զորավարժությանը ներգրավված էր նաև ՀՀ Տավուշի մարզի համայնքները,տարահանման մարզային հանձնաժողովը և ՔՊ ծառայությունները:

Շտաբային ուսումնավարժություններ

1) <<ՔՊ միջոցառումների կազմակերպումը ՀՀ Տավուշի մարզի ՔՊ համակարգը խաղաղից ռազմական դրության փոխադրման դեպքում>> թեմայով ՇՈՒ-ի անցկացում 2015թ, հունիսի 10-11-ին՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի, ՀՀ Տավուշի մարզի տարահանման հանձնաժողովի, մարզային ՔՊ ծառայությունների, Բերդավան, Դովեղ, Կոթի, Ոսկեպար, Բաղանիս, Ոսկևան, Բարեկամավան, Կիրանց, Սարիգյուղ, Բերքաբեր, Ազատամուտ, Ներքին Ծաղկավան, Վազաշեն, Այգեհովիտ, Այգեպար, Չինարի, Այգեձոր, Պառավաքար, Ներքին Կարմիր Աղբյուր և Մովսես համայնքների ՔՊ պետերի հետ:

2) Մասնակցություն ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ կողմից «**ՀՀ Տավուշի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպումը հակառակորդի հարձակման դեպքում» թեմայով** ՇՈՒ-ի և «**Տարահանման մարմինների ծավալումը» գործնական միջոցառումների անցկացմանը:**

3) ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ փրկարարական ծառայողների հետ <<ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ պատրաստականության բերումը խաղաղից ռազմական դրության անցման դեպքում>> թեմայով ՇՈՒ-ի անցկացում:

4) ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ փրկարարական ծառայողների հետ <<ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ անձնակազմի գործողությունները ուժեղ երկրաշարժի դեպքում>> թեմայով ՇՈՒ-ի անցկացում:

5) Մասնակցություն Ազատամուտ, Ներքին Ծաղկավան, Սարիգյուղ, Բերքաբեր, Վազաշեն և Այգեհովիտ համայնքներում <<Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը հակառակորդի հանկածակի հարձակման դեպքում>> թեմայով ՇՈՒ-երի անցկացմանը:

6) Մասնակցություն Բարեկամավան, Ոսկեպար, Ոսկևան, Բերդավան, Ներքին Կարմիր Աղբյուր և Պառավաքար համայնքներին <<Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում>> թեմայով ՇՈՒ-երի անցկացմանը:

7) Մասնակցություն Իջևան, Սևքար, Գանձաքար, Դիտավան, Խաշթառակ, Ակնաղբյուր, Լուսաձոր, Վերին Ծաղկավան և Վարագավան համայնքների կողմից <<Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը անտառային հրդեհների առաջացման դեպքում>> թեմայով ՇՈՒ-ի անցկացմանը:

8) Մասնակցություն Նոյեմբերյան, Ջուջևան, Կողբ, Այրում, Դեղձավան, Պտղավան, Արճիս, Բերդ և Տավուշ համայնքներին <<Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը համաճարակների առաջացման սպառնալիքի դեպքում>> թեմայով ՇՈՒ-ի անցկացմանը:

9) ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 22- ի <<Պետությունը պաշտպանության նախապատրաստելու շրջանակներում 2015թ. զորավարժությունների և մարզումների անցկացման պլան-ժամանակացույցը հաստատելու մասին>> թիվ 72-Ա Գ որոշման, ՀՀ Տավուշի մարզում 2015թ. ապրիլի 10-ին անցկացվել է շտաբային ուսումնավարժություն <<Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը հակառակորդի հարձակման դեպքում>> , իսկ 2015թ. սեպտեմբերի 15-ին անցկացվել շտաբային ուսումնավարժություն <<Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը, մարզի քաղաքացիական պաշտպանության համակարգը խաղաղից ռազմական դրության փոխադրման դեպքում>> թեմաներով:

Հատուկ տակտիկական ուսումնավարժություններ.

1) ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ-ի, <<Բերդի ԲԿ>> ՓԲԸ, ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ, <<ՀԷՑ>> ՓԲԸ <<Աղստև>> մասնաճյուղի <<Բերդի>> էլեկտրացանցի, <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ Տավուշի ԳԳՄ Բերդի տեղամասի և <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ <<Հարավ-արևելյան>> մասնաճյուղի Բերդի տեղամասի և <<Բերդի ԲԿ>> ՓԲԸ-ի հետ <<Փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը բնակելի բազմաբնակարան շենքերում կենցաղային վթարի դեպքում>> թեմայով ցուցադրական ՀՏՈՒ-ի անցկացում:

2) Մասնակցություն <<Իջևանի ԲԿ>> կողմից <<Սուր վարակիչ հիվանդության հայտնաբերման և տարածման կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացումը>> թեմայով ՀՏՈՒ-ի անցկացմանը:

3) Մասնակցություն <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ Տավուշի ԳԳՄ-ի կողմից <<Վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը գազամատակարարման ցանցերի վթարի դեպքում>> թեմայով ՀՏՈՒ-ի անցկացմանը:

4) Մասնակցություն <<ՀԷՑ>> ՓԲԸ Նոյեմբերյանի մասնաճյուղի կողմից <<Վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը էներգետիկ ցանցերում վթարի դեպքում>> թեմայով ՀՏՈՒ-ի անցկացմանը:

5) Մասնակցություն <<ԱրմենՏել>> ՓԲԸ Դիլիջան-Իջևան-Նոյեմբերյան-Տավուշ ՑՇՈՒ-ին <<Վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը կապի համակարգի վթարի դեպքում>> թեմայով ՀՏՈՒ-ի անցկացմանը:

6) Մասնակցություն <<Վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը ջրամատակարարման ցանցերի վթարի դեպքում>> թեմայով ՀՏՈՒ-ի անցկացմանը:

Օբյեկտային վարժանքներ.

Նվիրված ՔՊ միջազգային օրվան.

1) Մասնակցություն <<Տարահանման միջոցառումների իրականացումը ուսումնական հաստատություններում հակառակորդի օդուժի հարձակման դեպքում>> թեմայով օբյեկտային վարժանքների անցկացմանը Իջևանի ավագ դպրոցում, Դիլիջանի <<Երեխայի խնամքի պաշտպանության գիշերօթիկ հաստատություն>> ՊՈԱԿ-ում, Դովեղի և Տավուշի միջնակարգ դպրոցներում:
2) <<Պատսպարման, տարահանման և անհատական պաշտպանական միջոցներով ապահովման միջոցառումների իրականացումը>> թեմայով դասախոսության անցկացում Վազաշենի և Այգեհովիտի միջնակարգ դպրոցներում:
3) <<Պաշտպանական կառույցների տեսակները և նշանակությունը>> թեմայով դասախոսության անցկացում Բաղանիսի, Ոսկևանի և Կոթիի միջնակարգ դպրոցներում:
4) <<Առաջին բուժ օգնության հիմունքները բեկորային և հրազենային վնասվածքների դեպքում>> թեմայով դասախոսության անցկացում Բերքաբերի և Սարիգյուղի միջնակարգ դպրոցներում:
5) <<Մասսայական խոցման ժամանակակից զենքերի տեսակները և դրանց խոցման գործոնները>> թեմայով դասախոսության անցկացում Պառավաքարի, Վարագավանի և Վերին Ծաղկավանի միջնակարգ դպրոցներում

Նվիրված ՏԿԱԻՆ աշխատակցի օրվան.

1) Մասնակցություն <<Հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպումը ուսումնական հաստատություններում>> թեմայով օբյեկտային վարժանքների անցկացմանը Բերդի պետական քոլեջում, Դիլիջանի բժշկական պետական քոլեջում, Բերդավանի միջնակարգ դպրոցում և Իջևանի թիվ 5 հիմնական դպրոցում:
2) <<Փրկարարական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը ԱԻ առաջացման դեպքում>> թեմայով դասախոսության անցկացում Դիլիջանի ավագ դպրոցում և Դիլիջանի թիվ 4 հիմնական դպրոցում:
3) <<Արտակարգ իրավիճակները, դրանց դասակարգումը և բնութագրերը>> թեմայով դասախոսության անցկացում Վերին Կարմիր Աղբյուրի և Նորաշենի միջնակարգ դպրոցներում:
4) << ՓԾ գործառույթներն ու նպատակները>> թեմայով դասախոսության անցկացում Աղավնավանքի և Խաչարձանի միջնակարգ դպրոցներում:
5) << ՓԾ կառուցվածքն ու խնդիրները>> թեմայով դասախոսության անցկացում Հովքի և Հաղարծինի միջնակարգ դպրոցներում:
6) <<Փրկարարական աշխատանքների կազմակերպման և իրականացման առանձնահատկությունները ուսումնական հաստատություններում>> թեմայով դասախոսության անցկացում Ջուջևանի և Կողբի միջնակարգ դպրոցներում:
7) Մասնակցություն <<Հույսի կամուրջ>> ՀԿ Իջևանի մասնաճյուղի կողմից Ներքին Ծաղկավանի միջնակարգ դպրոցում <<Տարահանման կազմակերպումը երկրաշարժի դեպքում>> թեմայով վարժանքի անցկացմանը:

8) Մասնակցություն Շվեյցարիայի միջազգային զարգացման և համագործակցության գործակալության հետ համատեղ իրականացվող <<Տարածքային արագ արձագանքման թիմերի ստեղծում>> ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում 2015 թվականի ապրիլ ամսին նախատեսված միջոցառումներին:

9) Մասնակցություն Եվրահանձնաժողովի Մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչության Աղետներին նախապատրաստման ծրագրի (DIPECHO) և Օքսֆամի կողմից ֆինանսավորվող «Նպաստում Հարավային Կովկասում աղետների ռիսկերի նկատմամբ համայնքների դիմակայունությանը» ծրագրի շրջանակներում Օքսֆամի և «Հույսի

կամուրջ» ՀԿ-ի կողմից Իջևանի թիվ 4 հիմնական դպրոցում անցկացված «Տարահանումը երկրաշարժի ժամանակ» թեմայով վարժանքին:

10) Մասնակցություն Եվրահանձնաժողովի Մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչության Աղետներին նախապատրաստման ծրագրի (DIPECHO) և Օքսֆամի կողմից ֆինանսավորվող "Նպաստում Հարավային Կովկասում աղետների ռիսկերի նկատմամբ համայնքների դիմակայունությանը" ծրագրի շրջանակներում Տավուշի մարզպետարանում տեղի ունեցած հանդիպմանը մարզային ԱՌՆ թիմի հետ և <<Տարահանման իրականացումը երկրաշարժի ժամանակ>> թեմայով համատեղ վարժանքի անցկացմանը:
ՀՀ Տավուշի մարզում որոշակի աշխատանքներ են կատարվել պաշտպանիչ հենապատերի և պարզագույն թաքստոցների կառուցման ուղղությամբ:
ՀՀ Տավուշի մարզի Ներքին Կարմիր Աղբյուր, Բերքաբեր և Չինարի համայնքներում կառուցվել են պաշտպանիչ հենապատեր ,իսկ Ներքին Ծաղկավան և Բերդավան համայնքներում կառուցվել են պարզագույն թաքստոցներ:
Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

2. Մարզում ՏԻՄ-երի կողմից առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողության իրականացման մասին

/զեկ.Գ.Հարությունյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման

ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ/

Զեկուցողը ներկայացրեց, որ 2015թ. բնակչության սպառողական ապրանքների պահանջարկը գլխավորապես բավարարվել է խանութների, սպառողական ապրանքների շուկաների և կրպակների միջոցով:

Հաշվետու ժամանակաշրջանում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի հանձնարարականի մարզի 62 համայնքներից 48-ում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում իրականացվել է 776 ստուգումներ որից՝ 653 առևտրի, 78 հանրային սննդի և 45 կենցաղային ծառայությունների օբյեկտներում: Արդյունքում արձանագրվել են խախտումներ և սահմանված կարգով նշանակվել 200000 դրամ տուգանք, գանձվել՝ 130000 դրամ: Տեղեկատվությունը ամփոփվել և սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

Համայնքներում ոլորտի պատասխանատու մասնագետների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ վարչական վարույթի իրականացման, տուգանքների նշանակման և գանձման թեմաներով, ինչպես նաև առևտրի և ծառայությունների մասին օրենքի դրույթների կատարումն ապահովելու նպատակով:

2015թ. մարզպետի կողմից կիսամյակային և տարեկան կտրվածքներով շրջաբերականներ է ուղարկվել մարզի 62 համայնքների ղեկավարներին: Համայնքներից բարձրացված խնդիրների վերաբերյալ մարզպետարանի համապատասխան մասնագետների կողմից տրվել են մեթոդական ցուցումներ, կատարվել անհրաժեշտ պարզաբանումներ:

Ավարտելով իր զեկույցը, Գ.Հարությունյանը նշեց, որ մարզպետի որոշումների պահանջներով 2015թ-ի չորս եռամսյակների ընթացքում վարչական վերահսկողություններ են իրականացվել մարզի 12 համայնքներում: Ոլորտում տեղ գտած թերություններին վերաբերյալ տրվել են համապատասխան հանձնարարականներ, որոնք սահմանված ժամկետներում վերացվել են:

<u>Հանձնարարվեց.</u>

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման
Ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ Գ.Հարությունյանին.

Ամենօրյա հսկողության տակ պահել ոլորտում իրականացվող գործունեությունը, անհրաժեշտության դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցներ:

3. Մարզի համայնքների 2015թ. Տեղական բյուջեների կատարողականների և 2016թ. հաստատված տեղական բյուջեների մասին

/զեկ. Ռ.Ներսեսյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի

Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ մարզի 62 համայնքների 2016 թ. տեղական բյուջեների տարեկան նախատեսված եկամուտների հանրագումարը կազմել է 3218.5 մլն. դրամ, որից սեփական եկամուտները՝ 743.0 մլն. դրամ, որը կազմում է ընդհանուր գումարի 23.1 %-ը, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 2475.5 մլն. դրամ, այդ թվում ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիան՝ 2214.7 մլն. դրամ: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով մարզի համայնքներին նախատեսված դոտացիան 113.4 մլն. դրամով ավել է 2015 թվականին հատկացված դոտացիայից:

2016 թվականի ապրիլի 1-ի դրությամբ մարզի համայնքների եկամուտների փաստացի մուտքը կազմել է 782.0 մլն. դրամ, որը կազմում է առաջին եռամսյակի նախատեսվածի 99.2%-ը, իսկ սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 178.2 մլն. դրամ կամ կատարվել է նախատեսվածի 106.2 %-ը:

2016 թվականի ապրիլի 1-ի դրությամբ մարզի համայնքների սեփական եկամուտները 2015 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավել են հավաքագրվել 44.1 մլն. դրամով, այդ թվում հողի հարկի գծով՝ 25.9 մլն. դրամ, գույքահարկի գծով՝ 8.6 մլն. դրամ, տեղական տուրքի մասով՝ 422.0 հազար դրամ, այլ եկամուտների գծով՝ 9.9 մլն. դրամ: Պետական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների գծով պակաս է հավաքագրվել 660.0 հազար դրամ:

Ըստ առանձին եկամտատեսակների սեփական եկամուտների կատարողականները ս/թ ապրիլի 1-ի դրությամբ հետևյալն է.

- հողի հարկ – 2016 թ. առաջին եռամսյակում նախատեսվել է 36.9 մլն. դրամ, հավաքագրվել է 45.4 մլն. դրամ, կամ կատարվել է 132.8 %-ով (հավաքագրված գումարից 27.0 մլն. դրամը սահմանամերձ համայնքներին փոխանցված աջակցության գումարն է):

Հողի հարկի մասով ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Իծաքար 6.5 %, Պտղավան 11.6 %, Տավուշ 12.8 %, Գոշ 19.0 %, Արճիս 20.5 %, Դիտավան 23.1%, Գետահովիտ 28.6%, Աչաջուր 30.8 %, իսկ Զորական համայնքն ընդհանրապես գումար չի հավաքագրել (կցվում է ցածր կատարողականներ ունեցող համայնքների ցանկը),

- գույքահարկ -հավաքագրվել է 75.2 մլն. դրամ կամ կատարվել է 106.2%-ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Դիտավան 38.5 %, Լուսաձոր 51.6 %, Չինչին 59.5 %, իսկ Զորական համայնքն ընդհանրապես գումար չի հավաքագրել (կցվում է ցածր կատարողականներ ունեցող համայնքների ցանկը):

- տեղական տուրքեր – հավաքագրվել է 8.7 մլն. դրամ կամ կատարվել է 73.3 %-ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Նավուր 10.0 %, Հաղթանակ 27.0 %, Հովք 32.0 %, Վարագավան 34.7 %, Գանձաքար 38.2 % և այլ համայնքներ: Հարկ է նշել, որ թվով 13 համայնքներ, որոնք առաջին եռամսյակում նախատեսել են տեղական տուրքերից մուտքեր, ապրիլի 1-ի դրությամբ ընդհանրապես գանձումներ չեն կատարել: Նման իրավիճակներից խուսափելու համար համայնքների ղեկավարներին առաջարկվում է վերանայել եռամսյակային համամասնությունները (կցվում է ցածր կատարողականներ ունեցող համայնքների ցանկը):

- գույքի վարձակալությունից եկամուտներ – հավաքագրվել է 13.9 մլն. դրամ կամ կատարվել է 65.6 %-ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Հաղթանակ 4.2 %, Բագրատաշեն 13.7 %, Տավուշ 15.0 %, Գետահովիտ 15.5 % և այլ համայնքներ (կցվում է ցանկը): Իծաքար և Դեբեդավան համայնքները ապրիլի 1-ի դրությամբ ընդհանրապես գանձումներ չեն կատարել:

Ցածր կատարողական ունեցող համայնքների ղեկավարներին առաջարկվում է ձեռնարկել կտրուկ միջոցներ եռամսյակային համամասնություններով սահմանված սեփական եկամուտները հավաքագրելու ուղղությամբ:

ՀՀ կառավարության 18.02.2016 թ. թիվ 144-Ն որոշմամբ մարզի սահմանամերձ 23 համայնքների հողի հարկի և գույքահարկի փոխհատուցման նպատակով առաջին եռամսյակում ցուցաբերվել է 29.1 մլն. դրամի պետական աջակցություն: Սահմանամերձ համայնքների ղեկավարներին առաջարկվում է հետևողական լինել և հատկացված գումարներն ըստ հարկատուների մուտքագրել հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական բազա, որի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան: Ս/թ մարտի 18-ին հատկացված գումարների մուտքագրման վերաբերյալ տեղեկատվություն ներկայացրել են միայն Այգեհովիտ և Ոսկեվան համայնքները, իսկ կառավարության որոշմամբ սահմանված կարգի համաձայն բազաներում մուտքագրումները պետք է կատարվեն հատկացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

ՀՀ կառավարության 31.03.2016 թ. թիվ 344-Ն որոշմամբ մարզի համայնքներին նվազագույն աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացման, ինչպես նաև 1974 թվականից հետո ծնված նվազագույն աշխատավարձ ստացողների նպատակային սոցիալական վճարների հետ կապված, առաջացած լրացուցիչ ծախսերի փոխհատուցման նպատակով նախատեսվել է 139163.7 հազար դրամ, որից ս/թ ապրիլի 20-ի դրությամբ հատկացվել է 38656.1 հազար դրամ:

Մարզի 62 համայնքներից թվով 47 համայնքների հողի հարկ և գույքահարկ վճարողների հաշվառման ու հողի հարկի և գույքահարկի հաշվարկման տեղեկատվական ավտոմատացված համակարգի տվյալները վարվում են Իջևանի, Բերդի և Նոյեմբերյանի համայնքների միությունների կողմից: ՈՒսումնասիրությունը ցույց է տալիս, որ համայնքների կողմից ներկայացված հողի հարկի և գույքահարկի ապառքները 216.6 մլն. դրամով պակաս են համայնքների միությունների կողմից ներկայացված ապառքներից, իսկ 01.01.2015-01.04.2016թ. ժամանակահատվածում գանձապետարան մուտքագրված հողի հարկի և գույքահարկի գումարների և համայնքների միությունների կողմից տեղեկատավական բազա մուտքագրված գումարների տարբերությունը կազմում է 65.6 մլն. դրամ, այդ թվում գույքահարկը 15.5 մլն. դրամ, հողի հարկը 50.1 մլն. դրամ: Բերված տվյալները ցույց են տալիս, որ հողի հարկի և գույքահարկի դիմաց վճարված գումարներն ամբողջությամբ արտահայտված չեն տեղեկատվական բազաներում, որի հետևանքով առաջանում են համայնքներում առկա տվյալների և համայնքների միությունների կողմից վարվող բազաների միջև տարբերություններ (աղյուսակ 1 և 2):

2006 և 2008 թվականներին հողի հարկի և գույքահարկի բազաները համայնքների ավագանիների որոշմամբ հանձնվել են համայնքների միություններին, քանի որ նշված ժամանակահատվածում համայնքները չունեին համապատասխան տեխնիկական և մարդկային ռեսուրսներ, ինչպես նաև որոշ համայնքներում բացակայում էր ինտերնետային կապը: Այժմ համայնքներն ունեն բոլոր հնարավորություններն ինքնուրույն վարելու հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական բազաները, որը կնպաստի հավաքագրված գումարները ժամանակին մուտքագրել տեղեկատվական բազաներ, կհեշտացի համայնքների աշխատանքները բնակիչների հետ:

Համայնքներում հավաքագրված հողի հարկի և գույքահարկի գումարները համայնքները յուրաքանչյուր ամիս տրամադրում են համայնքների միություններին բազաներում մուտքագրելու համար, որը լրացուցիչ ժամանակ և աշխատանք է պահանջում համայնքներից, իսկ համայնքների միություններն էլ չունեն համապատասխան տեխնիկական և մարդկային ռեսուրսներ համայնքներից ստացված տեղեկատվությունները ժամանակին մուտքագրելու համար: Համայնքներից շատերը դիմել են մարզպետարան, որ ունեն հնարավորություն հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական բազաները ինքնուրույն վարելու համար և խնդրել են մարզպետարանի միջնորդությունը սահմանված կարգով այն հանձնելու համայնքներին:

ՀՀ Տավուշի մարզպետարանը պատրաստ է մարզի համայնքներին ցուցաբերել մեթոդական և խորհրդատվական օգնություն:

Առաջարկվեց.

Մարզի համայնքների ղեկավարներին՝

1. Ձեռնարկել միջոցառումներ 2016 թվականի տեղական բյուջեներով նախատեսված սեփական եկամուտները եռամսյակային համամասնություններով սահմանված չափաքանակներին համապատասխան հավաքագրելու ուղղությամբ:
2. Հետևողական աշխատանքներ տանել համայնքների միությունների հետ ՀՀ կառավարության 18.02.2016 թ. թիվ 144-Ն որոշմամբ համայնքներին հատկացված միջոցները ավտոմատացված տեղեկատվական համակարգ մուտքագրելու համար:
3. Սեփական եկամուտների մինչև 80 % կատարողական ունեցող համայնքների ղեկավարներին՝ կտրուկ միջոցներ ձեռնարկել տեղական բյուջեներով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրումն ապահովելու ուղղությամբ:

4. Մարզի համայնքներում աղբահանության, սանմաքրման և բարեկարգման աշխատանքների վերաբերյալ

/զեկ. Մ.Ղալումյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի

քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող սոցիալ-տնտեսական, կրթության, մշակույթի և սպորտի զարգացման, գիտատեխնիկական առաջընթացի հետ զուգահեռ մեծ ուշադրություն է դարձվում բնապահպանական, սանիտարական, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներին:

Տավուշի մարզպետի 15.11.2010թ. թիվ 75-Ա կարգադրությամբ ստեղծվել է սանմաքրման և աղբահանության աշխատանքները համակարգող մարզային հանձնաժողով:

Հանձնաժողովը պարբերաբար կատարում է ուսումնասիրություններ, որի արդյունքում հայտնաբերված և արձանագրված թերությունները վերացնելու նպատակով մարզպետի մոտ հրավիրված խորհրդակցություններում դրանք քննարկվում, կազմվում են միջոցառումների պլան, տրվում են հասցեական հանձնարարականներ, սահմանվում ժամկետներ, գրություններ են ուղարկվում համայնքապետերին և համապատասխան տարածքը սպասարկող ճանապարհաշինարարներին:

Իրականացված հետևողական աշխատանքների շնորհիվ բավականաչափ բարելավվել է համայնքների և համայնքների տարածքներով անցնող ավտոճանապարհների ու նրանց հարակից տարածքների սանիտարական վիճակը: Ասվածը վերաբերվում է մարզի բոլոր համայնքներին: Բայց հարկ եմ համարում նշել Դիլիջան, Իջևան, Բերդ, Հաղարծին, Բաղանիս, Ջուջևան, Հաղթանակ, Պտղավան, Ազատամուտ, համայնքների կատարած առավել դրական աշխատանքը:

Սանմաքրման աշխատանքների կազմակերպման գործընթացում քաղաքային համայնքներում արմատավորվել է մի արատավոր երևույթ, երբ ուշադրությունը սևեռվում է կենտրոնական փողոցների մաքրության ապահովմանը՝ աչքաթող անելով համայնքի ծայրամասային փողոցները:

Հարցը քննարկման առարկա է դարձել նաև անցյալ տարվա մարզխորհրդի նիստում, սակայն խնդրին դարձյալ բավականաչափ ուշադրություն չի դարձվել:

Մարզի միջպետական, հանրապետական և միջհամայնքային նշանակության ավտոճանապարհներին հարող տարածքների մաքրության պահպանման աշխատանքները ր ճանշին կազմակերպությունները պարտավոր են իրականացնել ամենօրյա գրաֆիկով:

Կատարված ուսումնասիրություններից հանգում ես եզրակացության, որ ավելի նպատակահարմար և քիչ ծախսատար է վերացնել թերություններն առաջացնող պատճառները, քան հետևանքները: Այս ամենին զուգահեռ անհրաժեշտ է, որ տեղական ինքնակառավարման մարմինները և համապատասխան կազմակերպությունները մշտական ուշադրության կենտրոնում պահեն բնակչության շրջանում համայնքների սանիտարական մաքրման ուղղությամբ տարվող քարոզչական և կանխարգելիչ աշխատանքները թե՛ պետական և թե՛ մասնավոր սեկտորների ոլորտներում՝ նրանց գիտակցության մեջ արմատավորելով ''մեկ համայնք-մեկ տուն'' սկզբունքը:

Նշվածի վառ օրինակներ են Աղստև գետի Իջևանի հատվածը, Գետահովիտ գյուղ տանող խաչմերուկը և գյուղի վերևի հատվածը, Ենոքավան գյուղ տանող ճանապարհի նախկին հացի գործարանին կից տարածքը, Լուսաձորի խաչմերուկի դիմացի լանջը և այլն:

2016թ. ապրիլի 1-30 մարզում կհայտարարվի սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման միամսյակ:

Առաջարկվում է համայնքների ղեկավարներին միամսյակը կազմակերպված և արդյունավետ անցկացնելու նպատակով նախապատրաստել անհրաժեշտ միջոցներ՝ գործիքներ, տնկիներ, աշխատանքներին ներգրավելով բնակչության լայն խավերին ու դպրոցականների:

Սանիտարական մաքրման աշխատանքներն ու շրջակա միջավայրի պահպանությունը բոլորիս խնդիրն է, այն պետք է կրի շարունակական բնույթ և գտնվի բոլորիս մշտական ուշադրության կենտրոնում:

<u>Հանձնարարվեց.</u>

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության

վարչության գլխավոր մասնագետ Մ.Ղալումյանին.

Մշտական ուշադրության կենտրոնում պահել սանիտարական մաքրման աշխատանքների և շրջակա միջավայրի պահպանության խնդիրը:

ՄԱՐԶՊԵՏ **Հ.ԱԲՈՎՅԱՆ**